



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 4 - Ա  
13 հունվարի 2014 թ.

ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ, 68-րդ, և 94-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի մարտի 3-ի N 202-Ն, 2011 թվականի ապրիլի 14-ի N 387-Ն, 2011 թվականի հուլիսի 28-ի N 1058-Ն, 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1844-Ն, 2010 թվականի ապրիլի 1-ի N 445-Ն, 2012 թվականի նոյեմբերի 29-ի N 1507-Ն որոշումների և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1110-Ն հրամանի պահանջները

**Կարգադրում եմ՝**

1. Մարզի առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ մարզպետարանի աշխատակազմ ներկայացնել.
- 1) մինչև 2014 թվականի փետրվարի 1-ը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի թիվ 1058-Ն որոշմամբ հաստատված ընկերության 2013 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը՝ փաստաթղթային և էլեկտրոնային ձևով, իսկ եռամսյակային հաշվետվությունները՝ եռամսյակի ավարտին հաջորդող առաջին ամսվա մինչև 10-ը
- 2) մինչև 2014 թվականի մարտի 1-ը՝ 2014 թվականի ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվը և հաստիքացուցակը՝ 2 օրինակից.
- 3) մինչև 2014 թվականի ապրիլի 15-ը՝ 2013թվականի տարեկան ֆինանսական հաշվետվության 1. 2. ձևերը, զուտ շահույթի բաշխման ուղղությունները, ծախսման նախահաշիվը, պետական բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե շահաբաժնի վճարման առաջարկվող

չափի վերաբերյալ առաջարկությունը և հաշվարկը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ. նոյեմբերի 30-ի թիվ 1110-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան, ինչպես նաև շահութահարկի պարզեցված հաշվարկի օրինակը՝ հաստատված տարածքայի հարկային տեսչության կողմից, տնտեսագիտական դասակարգման՝ 2012 թվականի փաստացի և 2013 թվականին՝ նախահաշվով նախատեսված և փաստացի կատարված եկամուտների ու ծախսերի մասին տեղեկանքը (համաձայն կից ձևաչափի), ինչպես նաև 2013թվականի տարեկան ճշգրտված ֆինանսա-տնտեսական մոնիտորինգի տվյալներ /ՖՏՄ 1. և հավելված 3.6 ձևերով/՝ 2 օրինակից:

- 4) Յուրաքանչյուր եռամսյակը հաջորդող առաջին ամսվա մինչև 10-ը՝ ընկերության եռամսյակային եկամուտների և ծախսերի(Նախահաշվով նախատեսված և փաստացի կատարված) ու ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, ինչպես նաև դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի մասին տեղեկատվությունը:
2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը /Ա. Մելքոնյան/ և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Յու. Մուշեղյան/ ապահովել:
  - 1) առողջապահական ընկերությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների, ֆինանսական եկամուտների և ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների ու այլ փաստաթղթերի ընդունումը, վերլուծումը և ներկայացումը մարզպետի հաստատմանը.
  - 2) սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, իսկ ֆինանսատնտեսական մոնիտորինգի ձևերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն.
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ



Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ